ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/46

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.05.2018թ. թիվ 03/26-3/8056-18 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04227903) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.04.2018թ. թիվ 01/61-9806 գրության հիման վրա, 04.05.2018թ. ՀՀ նախաձեռնել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 27.04.2018թ. թիվ 01/61-9806 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 26.02.2018 թվականին կնքված «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/35» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30-րդ օրացուցային օրը ներառյալ:

Տեղեկացնում եմ, որ Ընկերությունը խախտել է Պայմանագրի 1.1 և 1.2 կետերի պահանջները, այն է՝ Պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուին չեն տրամադրվել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ

պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ընկերությունը փաստացի չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը միակողմանի հրաժարվել է կնքված աշխատանքների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն միակողմանի լուծված և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Նարինե Կիրակոսյանը:

3. <u>«Սեյսմշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Սեյսմշին» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 04.05.2018թ. թիվ 03/26-3/8056-18 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր «Սեյսմշին» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Ռաֆայել Մկրտչյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/46 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձին ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 04.05.2018թ. թիվ 03/26-3/8056-18 գրությունը և կից փաստաթղթերը, Երևանի քաղաքապետարանի 27.04.2018թ. թիվ 01/61-9806 գրությունը, Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 26.02.2018 թվականին կնքված «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/35» ծածկագրով գնման պայմանագիրը, «Սեյսմշին» ՍՊԸ-ի կողմից Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին հայտնած բանավոր դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 26.02.2018թ. կնքվել է «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/35» ծածկագրով գնման պայմանագիրը (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետև՝ Աշխատանք)՝ համաձայն նույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

• 1.2 կետի համաձայն՝ Աշխատանքը կատարվում է նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

• 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք, Պատվիրատուն իրավունք ունի.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրի համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

• 2.1.3 կետի «բ» ենթակետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է նույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է Աշխատանքի կատարման ժամկետը:

Պայամանգրի N 1 հավելվածով նախատեսված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է կատարել աշխատանք՝ հետևյալ տեխնիկական բնութագրով.

«Նախատեսել.

- Տիպարային 28մx17մ չափերի մինի ֆուտբոլի դաշտի կառուցում;
- Տարածքի լուսավորության, բարեկարգման իրականացում, աղբամանների և նստարանների տեղադրում;
- Տարածքի սահմանների ճշտում և նշահարում;
- Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված շին.հրապարակի ժամանակավոր պատնեշով առանձնացում:

1.Ներկայացնել մանրամասնորեն կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորված աշխատանքային ծավալներ:

2. Նախագիծը մշակել գործող նորմերի պահանջներին համաձայն;

3. Նախագիծը ներկայացնել 7 օրինակից;

4. Նախագիծը ներկայացնել փորձաքննությամբ;

5. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների ավարտից հետո նախագծերը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հետ;

6. Ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները;

7. Ներկայացնել աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտակա ն հատկանիշներին ներկայացվող պահանջները;

8. Նախագիծը ներկայացնել էլեկտրոնային կրիչովթվով երկու մարդատար վերելակների համար իրականացնել մի շարք ստուգումներ, այդ թվում՝ ստուգել երկու վերելակների տեխնիկական անվտանգության փաստաթղթերը (վկայագիր, անձնագիր, հրահանգավորման մատյան), ինչպես նաև ստուգել մասնագետ կադրերի կողմից կատարված փորձարկման ակտերը»:

Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ պայմանագրի կատարման ժամկետ է սահմանված՝ պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընկերությունը Պայմանագրով նախատեսված ժամկետում պատվիրատուին չեն տրամադրվել հիշյալ նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը՝ վկայակոչելով պայմանագրի 2.1.2 կետը, կարծիք հայտնեց, որ Ընկերության կողմից Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխանող աշխատանքը կատարված չլինելու դեպքում Պատվիրատուն պարտավոր էր նույն կետով սահմանված կարգով չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրի համապատասխանող աշխատանքով անհատույց

փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրով նախատեսված տույժերը և տուգանքները: Ընկերության ներկայացուցիչը նշեց նաև, որ Պայմանագրի պատշաճ կատարումն ապահովելու գործում Պայմանագրի կատարման ժամանակահատվածում Ընկերության համար էական խոչընդոտ են հանդիսացել նաև Հայաստանի Հանրապետությունում ստեղծված ներքաղաքական իրավիճակով պայմանավորված հայտնի իրադարձությունները, որոնք վերջինիս կողմից որակվեցին որպես Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված՝ անհաղթահարելի ուժի ազդեցություն (ֆորս-մաժոր): Մասնավորապես, Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ի ղեկավար կազմը և աշխատակիցները աշխատավայր հասնելու անհնարինությամբ պայմանավորված՝ զրկվել են Պայմանագրով նախատեսված պարտավորությունները պատշաճ և ժամանակին կատարելու հնարավորությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի հետ 26.02.2018թ. կնքել է «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/35» ծածկագրով գնման պայմանագիրը, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում չի կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները ողջ ծավալով, ինչը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերության ներկայացուցչի կողմից Ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ մատնանշած քաղաքական հուզումները ժամանակագրական առումով չեն համընկել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով սահմանված՝ պայմանագրի կատարման ժամկետի հետ (ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 30-րդ օրացուցային օրը ներառյալ) և չէին կարող խոչընդոտ հանդիսանալ Պայմանագրով նախատեսված պարտավորությունները պատշաճ և ժամանակին կատարելու համար:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ պայմանագրով նախատեսված Աշխատանքը նույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետներում չկատարելով՝ Ընկերությունը խախտել է Երևանի քաղաքապետարանի և «Սեյսմշին» ՍՊԸ-ի միջև 26.02.2018թ. կնքված «ԵՔ–ԲԸԱՇՁԲ–18/35» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 և 1.2 կետերով ստանձնած պարտավորությունը:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Ընկերության ներկայացուցչի կողմից վկայակոչված՝ Պայմանագրի 2.1.2 կետի «ա» ենթակետով սահմանված՝ պատվիրատուի կողմից լրացուցիչ ողջամիտ ժամկետի տրամադրման հնարավորությունը վերաբերում է կատարված աշխատանքների որակի անհամապատասխանության դեպքերին, այլ ոչ թե աշխատանքների կատարման ժամկետի խախտման դեպքերին (էական խախտում), որոնց դեպքում Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի ուժով Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում

որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սեյսմշին» ՍՊԸ-ին Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար առկա են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 04.05.2018թ. թիվ 03/26-3/8056-18 գրությամբ «Սեյսմշին» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 04227903) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Սեյսմշին» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**